Թիվ ՍնԴ/4169/04/25 սնանկության գործով պարտապան Գևորգ Խաչատուրի Միսակյանի պարտավորությունների դիմաց «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ում գրավադրված անշարժ գույքի բաց դասական եղանակով՝ լոտի մեկնարկային գնի հավելմամբ, աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-16 11:07:06

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Թիվ ՍնԴ/4169/04/25 սնանկության գործով 02.02.2026թ. սնանկ ճանաչված Գևորգ Խաչատուրի Միսակյանին սեփականության իրավունքով պատկանող, և վերջինիս կողմից «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առջև ստանձնած դրամական պարտավորությունների կատարման ապահովման դիմաց գրավադրված թվով 1 /մեկ/ անշարժ գույքի 2026թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 16:00-ին նշանակված աճուրդը չի կայացել՝ հայտեր չլինելու պատճառով:
Թիվ ՍնԴ/4169/04/25 սնանկության գործով պարտապան Գևորգ Խաչատուրի Միսակյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Մաթևոսյանի կողմից 2026թ. նոյեմբերի 13-ին, ժամը՝ 16:00-ին, ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի /դատավոր՝ Ս.Թադևոսյան/ 02.02.2026թ.-ի թիվ ՍնԴ/4169/04/25 վճռով սնանկ ճանաչված պարտապան Գևորգ Խաչատուրի Միսակյանի (անձնագիր՝ AO0350427, հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավան, Հր.Աճառյան փող. 10 շենք, բն.3) Դատարանի կողմից հաստատված պարտատերերի պահանջների բավարարման նպատակով, պարտապան Գևորգ Խաչատուրի Միսակյանին սեփականության իրավունքով պատկանող և վերջինիս կողմից «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առջև ստանձնած դրամական պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրված, գրավի առարկա հանդիսացող քաղաք Երևան, Ավան, Աճառյան փողոց 10 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքի աճուրդային վաճառքը՝ ներկայացված 1 /մեկ/ լոտով, ըստ կից ֆայլով ներկայացված նկարագրության և մեկնարկային գնի:
Յուրաքանչյուր չկայացած աճուրդից հետո, հաջորդ աճուրդին՝ կրկնաճուրդին, անշարժ գույքի մեկնարկային գինը /արժեքը/ նվազեցվելու է լոտի արժեքի /գնի/ նախորդ աճուրդի մեկնարկային գնից 10 /տասը/ տոկոսի չափով:

Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Գևորգ Խաչատուրի Միսակյանի անվամբ «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 2474403473980002 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև հայտ և/կամ ծանուցում ներկայացնելու պահը: Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով, աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գինն առաջարկած մասնակիցը:
Աճուրդը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանի համաձայն՝ հրամանով սահմանված կարգով՝ ներառյալ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումների:
Նշված ենթաօրենսդրական ակտը՝ հրամանը, հանդիսանում է նաև աճուրդի անցկացման կանոնակարգը:
Հայտի ձևը և աճուրդի կանոնակարգը անվճար կարող եք ստանալ սնանկության գործով կառավարչից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից 18:00-ն՝ ք. Երևան, Հանրապետության փ. 67շ., թիվ 57 գրաս. տարածք հասցեով կամ տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե, որին կուղարկվի նշված փաստաթղթերի օրինակները: Լոտը կարող է ուսումնասիրվել ցանկացած աշխատանքային օր 09:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ նախապես պայմանավորվածություն ձեռք բերելով սնանկության գործով կառավարչի հետ: Լոտը ուսումնասիրելու և աճուրդին առնչվող այլ հարցերով դիմել սնանկության գործով կառավարիչ Արմեն Մաթևոսյանին՝+374 96 224 228 հեռախոսահամարով կամ հաղորդագրությունը ուղարկել armen.matevosyan@lawconsult.am
էլեկտրոնային փոստի հասցեին կամ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեով:
Էլեկտրոնային հաղորդագրության ձևաչափը նախընտրելի է:

451 -Լոտի նկարագրություն.pdf

45-2. Աճուրդի անցկացման և հայտերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն.pdf

37441224254

armen.matevosyan@lawconsult.am

-